

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

ձԱՆԱՇԵԱՆ Հ. ՄԵՍՐՈՊ. - Փառքի լոյսերուն մէջ 217

ՊԱՏՄԱԿԱՆ

ՀԱՅՈՒՆԻ Հ. ՎԱՐԴԱՆ. - Նորակերտ հայ Լուսիններ (շար.) 225

ՄԻՍԱԲԵԱՆ ԲԺ. Պ. - Լուի Փաստէօն (1822-1895) Ե. Գիտական Նուաճումները (շար.) 229

ԱԳԱՄԵԱՆ Հ. ԱՐԲԱՆՈՎ. - Պէտտէօնի արար պատմագիրը և Հայերը (շար.) 246

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՏԻՐԱՍԵԱՆ ԻՆՆՈՎԱՆԵՏԻՈՍ. - Ս. Բարսիլի հայ ձեռագիրներու հաւաքածոն (շար.) (Թրգմ. Հ. Բ. Վ. Զրաքեան) 237

ՔԻՐՈՍԵԱՆ ԶԱՐՈՒԹԻՒՆ. - Յովհաննէս Երզնկացի-Ծործորեցի (Նորագիտ Նիւթեր Ս. Ղազարու մէջ նոր ձեռագրէն) 242

ԿՐԹՆԱԿԱՆ

ՏԵՐ ՆԵՐՍԵՍԵԱՆ Հ. ՆԵՐՍԵՍ. - Մեր Նախնեաց հաւաքը Տերափոր Անարատ Յովնան մասին - Յաւելուած 233

ԳՐԱԿԱՆ

ԱԹՄԱՏԵԱՆ ՄԱՌԻ. - Թուռնի մը պոքակին մէջ . 250

ՅՈՎՀԱՆՆԵՍԵԱՆ Հ. ՎԱՀԱՆ. - Գանկի մը - Պատկանուիլը . 252
Արահեմը - Անձանթիւն . 253

ձԱՆԱՇԵԱՆ Հ. Մ. - Սարոյանի իր վերջին գործին «Րոք Վահրամ»-ին մէջ 256

ԾԻՍԱԳԻՏՈՒԹԻՒՆ

Hindie Grégoire Archv. - Notes liturgiques sur l'office Arménien: I. - Opinions de deux savants Liturgistes Européens (à suivre) 259

ԳԵՂԱՐՈՒԵՍ

ձԱՆԱՇԵԱՆ Հ. Մ. - Քանի մը օր Հոսմի մէջ. Յուդահանդէս ձեռագիրներու - ցուցահանդէս Սալփատոր Տալի-ի 261

ԱԶԳԱՅԻՆ ԱՐՁԱԳԱՆԳ

ձԱՆԱՇԵԱՆ Հ. Մ. - Հ. Ներսէս Վրդ. Ակինեան՝ վաստակաւոր յորեկարը (1904-1954) . 254

ARTICLE DE FOND

Djanachian P. M. - Pie X dans la gloire des saints 217

HISTOIRE

Hatzouni P. Vardan. - Histoire des nouveaux Lusignans (suite) 225

Missakian Dr. B. - Louis Pasteur (1822-1895) Les conquêtes scientifiques (suite) 229

Adamian P. Abraham. - L'historien arabe Belladhori et les Arméniens (suite) . 246

PHILOLOGIE

Innoc. W. Driessen. O. P. - Les recueils des manuscrits arméniens de St. Basile (trad. en arm. par le Rév. P. Chérubin Tcherekian) (suite) 237

Kurdian Haroutioun. - Hovhannès Yerzen-gatzi - Dzordzoretzi 242

RELIGION

Der Nersessian P. Nerses. - La foi de nos ancêtres sur l'Immaculée Conception de la Ste Vierge - Appendice . . 233

LITTERATURE

Atmadjian Mari. - Un oiseaux dans la forêt 250

Hovhannessian P. Vahan. - À un crâne - La mimeuse . 252
La rue - À l'inconnu . 253

Djanachian P. M. - W. Saroyan dans sa dernière oeuvre: «Rock Wagram» . 256

LITURGIE

Hindie Grég. Arch. - Notes liturgiques sur l'Office Arménien: I. - Opinions de deux savants liturgistes européens (à suivre) 259

BEAUX ARTS

Djanachian P. M. - Quelques jours à Rome: L'exposition des manuscrits - L'exposition de Salvador Dali 261

ECHO ARMÉNIEN

Djanachian P. M. - Le jubilé de cinquante ans d'activité littéraire (1904-1954) du Rév. P. Nersès Akinian, de la Congrégation Mékhitariste de Vienne 254

ԲԱՋՄԱՎԷՊ

ՀԱՆԴԻՍԱՐԱՆ

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ - ԳՐԱԿԱՆ - ԳԻՏԱԿԱՆ - ԲԱՐՈՅԱԿԱՆ

1843 - 1954

ձԺԲ. ՏԱՐԻ



ՕԳՈՍՏՈՍ - ՀՈԿՏԵՄԲԵՐ

ԹԻՒ 8-10

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

ՓԱՌՔԻ ԼՈՅՍԵՐՈՒՆ ՄԷՋ

Փառքի, վերելքի օր մըն էր տարւոյս Մայիս 29-ի իրիկունը, Ս. Պետրոսի հրապարակին վրայ, վերջալուսային հանդարտ զը-
լարթութեան մէջ, երբ աստուածային լոյսի ողորմմաներուն ընդ-
մէջէն կը լսուէր ձայնը Եկեղեցւոյ Գահակալին՝ որ սուրբերու
կարգը կը դասէր Պիոս Ժ. Սրբազան Քահանայապետը:

Կենսունակութիւն, ապրում, հոգեկան բարձրութիւն, սլացք
կ'ողեւորէր հարիւր հազարաւոր բաղմութիւններ, խոնուած աշ-
խարհիս մեծագոյն հրապարակին վրայ, եւ միլիոնաւոր ժողո-
վուրդներ՝ որ այդ պահուն ձայնապիւղներու և հեռատեսիլներու
միջեւ դարձած աչք ու ականջ՝ կը հետեւէին մեծ եղելութեան:
Քսաներորդ դարու սեմին վրայ, ուր նիւթն ու մեքենական
հսկայական նուաճումները կը հեռացնէին հոգիները աստուածային
լոյսի ականքէն, Պիոս Ժ. ի շքեղ դէմքը կը ցցուէր, որպէս Աստուծոյ
մարդը, ուղղելու միտքերը դէպի Քրիստոսի եկեղեցին, աւանդա-
պահը ճշմարտութեան եւ շնորհի:

Դարուն Սուրբն էր որ կը յայտնուէր իր մէջ: Սրբացուցման
վճիռէն վերջ երբ կը բացուէր վարագոյրը պարզելու համար
անոր դէմքը մարդկութեան առջեւ, յուզումը բոլոր անոնց որ
զինքը տեսած էին, եւ խանդավառութիւնը հաւատացեալ հոգի-
ներու՝ որոնք իր ձեռքով ստացած էին զեղումը երկնային պար-
զեւներուն, կը ստեղծէր հոն հրապարակին վրայ տեսակ մը աստ-
ուածային երկարացում: